



Тем, что эта книга дошла до Вас, мы обязаны в первую очередь библиотекарям, которые долгие годы бережно хранили её. Сотрудники Google оцифровали её в рамках проекта, цель которого – сделать книги со всего мира доступными через Интернет.

Эта книга находится в общественном достоянии. В общих чертах, юридически, книга передаётся в общественное достояние, когда истекает срок действия имущественных авторских прав на неё, а также если правообладатель сам передал её в общественное достояние или не заявил на неё авторских прав. Такие книги – это ключ к прошлому, к сокровищам нашей истории и культуры, и к знаниям, которые зачастую нигде больше не найдёшь.

В этой цифровой копии мы оставили без изменений все рукописные пометки, которые были в оригинальном издании. Пускай они будут напоминанием о всех тех руках, через которые прошла эта книга – автора, издателя, библиотекаря и предыдущих читателей – чтобы наконец попасть в Ваши.

### **Правила пользования**

Мы гордимся нашим сотрудничеством с библиотеками, в рамках которого мы оцифровываем книги в общественном достоянии и делаем их доступными для всех. Эти книги принадлежат всему человечеству, а мы – лишь их хранители. Тем не менее, оцифровка книг и поддержка этого проекта стоят немало, и поэтому, чтобы и в дальнейшем предоставлять этот ресурс, мы предприняли некоторые меры, чтобы предотвратить коммерческое использование этих книг. Одна из них – это технические ограничения на автоматические запросы.

Мы также просим Вас:

- **Не использовать файлы в коммерческих целях.** Мы разработали программу Поиска по книгам Google для всех пользователей, поэтому, пожалуйста, используйте эти файлы только в личных, некоммерческих целях.
- **Не отправлять автоматические запросы.** Не отправляйте в систему Google автоматические запросы любого рода. Если Вам требуется доступ к большим объёмам текстов для исследований в области машинного перевода, оптического распознавания текста, или в других похожих целях, свяжитесь с нами. Для этих целей мы настоятельно рекомендуем использовать исключительно материалы в общественном достоянии.
- **Не удалять логотипы и другие атрибуты Google из файлов.** Изображения в каждом файле помечены логотипами Google для того, чтобы рассказать читателям о нашем проекте и помочь им найти дополнительные материалы. Не удаляйте их.
- **Соблюдать законы Вашей и других стран.** В конечном итоге, именно Вы несёте полную ответственность за Ваши действия – поэтому, пожалуйста, убедитесь, что Вы не нарушаете соответствующие законы Вашей или других стран. Имейте в виду, что даже если книга более не находится под защитой авторских прав в США, то это ещё совсем не значит, что её можно распространять в других странах. К сожалению, законодательство в сфере интеллектуальной собственности очень разнообразно, и не существует универсального способа определить, как разрешено использовать книгу в конкретной стране. Не рассчитывайте на то, что если книга появилась в поиске по книгам Google, то её можно использовать где и как угодно. Наказание за нарушение авторских прав может оказаться очень серьёзным.

### **О программе**

Наша миссия – организовать информацию во всём мире и сделать её доступной и полезной для всех. Поиск по книгам Google помогает пользователям найти книги со всего света, а авторам и издателям – новых читателей. Чтобы произвести поиск по этой книге в полнотекстовом режиме, откройте страницу <http://books.google.com>.

200.

889. C. 26 (2)

ԱՆՉԵՒԱՏՈՒԹԵԱՆ

Ի ԳԵՄ

*Ankhatoutian.*

Սովորելու ո՞ր գրաստանն օրհնելը :

Երես 6 :

ԵՐԿՐՈՐԴ ՏԳԱԳՐՈՒԹԻՒՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ

Ի ՏՊԵՐԵՆԻ Ե. Գ. ՉԸՐՉԻԼԻ

1856



# ԱՆՀԷՒՆՈՒԹԵԱՆ ԳԻՄ

Մովսէս ռ-ը գրաստ աս օրէնէր :

Գեղեցկատեսիլ քաղաքի մը մէջ մեծ պատուով և բնական պարգևներով զարդարուած իրաւագէտ մարդ մը կը բնակէր . անոր բարոյական վարքը մասնաւորապէս չեմ գիտեր , բայց միայն որ իր հայհոյիչ ըլլալը աժենուն յայտնի էր : Ենչպէս որ ինքը Ափրիկեցի սև ծառայ մը ունէր՝ որուն հետ խիստ անողորմաբար վարուելով իր հայհոյելը իր դրացիները կը լռէին :

Օր մը աս պարոնը բարեպաշտ Քրիստոնէի մը հանդիպեցաւ , որ անիկայալ իրաւագէտ էր , ու ըսաւ անոր . “ Բարեկամ , Քրիստոնէական կրօնքին ճշմարտութիւնը քննել կ’ուզեմ . արդեօք Քրիստոնէութեան ճշմարիտ ըլլալը ցուցունող ո՞ր գիրքը կ’արդալու յարմար կը սեպէք ” :

Բարեպաշտն իրաւագէտը անոր ըրած հարցումին զարմանալով՝ պատասխանեց . “ Բարեկամ , ատ անանկ հարցում մըն է՝ որն որ շատ առաջուց պէտք էր ձեզի ստուգել . պէտք չէր որ ասանկ հարկաւոր նիւթին քննելը մինչև աս վերջին ատենները թողէիք ” .

“ Այո՛ , հիմա շատ ուշ է՝ ըսաւ հարցունողը . ես աս բանիս վրայ շատ բան չէի գիտեր , բայց

միշտ կը կարծէի թէ իմաստուն մարդոց շատերէն անարգուած է Վրիստոնէութիւնը: Ենչ և իցէ՞ հիմա ես աղէկ մը քննել կ'ուզեմ ատ նիւթը. քանզի մեռցունող ախտ մը ունիմ իմ վրաս, (ինչպէս որ իմ բժիշկս կ'ըսէ) որով հաւանակա- նաբար չեմ կրնար երկար ատեն ապրիլ, բայց միայն տարի ու կէս, կամ երկու տարիի չափ: Ուրեմն որ գիրքը կարդալ կը խրատէք զիս, Տէր իմ":

“Մտուածաշունչ գիրքը”, ըսաւ մէկալը:

“Կարծեմ իմ միտքս չէք իմանար”, ըսաւ նորէն անհաւատը, բարեպաշտին պէս ինքը հիմա զարմանալով. “ես Մտուածաշունչ գիրքին ճշմարտութիւնը քննել կ'ուզեմ”:

“Ես ալ անոր համար Մտուածաշունչ գիրքը կարդալ կը խրատեմ քեզ”, կրկնեց նորէն իր քրիստոնեայ բարեկամը. “և պատճառներն ալ ցուցունեմ քեզի: Մտալինն ա'ս է՝ որ եթէ նիւթի մը վրայ վիճաբանութիւն ընել ուզենք, պարտինք առաջ աղէկ մը գիտնալ ան նիւթին ինչ ըլլալը, ու ետքը անոր վրայ վիճաբանութիւն ընել. բայց ասոր հակառակ անհաւատներուն շատերը ամենեին տեղեակ չեն Սուրբ Գիրքին: Երկրորդ՝ ես աղէկ գիտեմ որ Սուրբ Գիրքին ճշմարտութեանը համար շատ զօրաւոր ապացոյցներ կան իր մէջը. այսինքն՝ իր սրբութիւնը, իմաստութիւնը, բարութիւնը, խորունկութիւնը, և այլն”:

“Եւ ո՞նակէց սկսեմ, “Սո՞ր կտակարանէն”, հարցուց անհաւատը:



“Չէ՛ , Լստուածաշունչին սկիզբէն՝ Օննդոց գիրքէն” , ըսաւ մէկալը :

ԼնՏաւատը Լստուածաշունչի մեկնութեան գիրք մը ծախու առաւ՝ տուն գնաց նստեցաւ ու սկսեց շատ զգուշութեամբ Սուրբ Գիրքը կարդալ , և իր սուր ու աղէկ վարժուած միտքին զօրութիւնովը անոր ճշմարտութեանը վրայ խիստ ու անաչառ քննութիւն ընել , և երբոր կը շարունակէր իր կարդալը՝ իր պաշտօնակից լքարեկամը երբեմն տեսութիւն ընելու կու գար : ԼնՏաւատը՝ ազատաբար կը խօսէր անոր հետ իր կարգացածներուն վրայով , և կամ անոր առջևը կը դնէր իր հակառակութիւնները , այսինքն թէ ինքը իր կարգացածներուն մէկին կը հաճէր , մէկալին ազդու ու գեղեցիկ ըլլալը կը դատէր , բայց բան կար որ չէր կրնար հաւատալ :

Իրիկունձ մը երբոր քրիստոնեայ իրաւագէտը անհաւատին տունը գնաց , տեսաւ անիկայ՝ որ խիստ տրտմած դէմքով սենեակին մէջը կը պըտտէր և խորունկ մտմտութի մէջ թաղուած էր , և չիմանալով իր բարեկամին ներս մտնելը , տակաւին կը շարունակէր իր պտըտելը : Ա՛ երջապէս իր բարեկամը սկսեց խօսիլ . “Տէ՛ր իմ , կ’երևայ թէ դուն մութ մտածմունքներու մէջ ես . ի՞նչ կը մտմտաս” :

“Տասը Պատուիրանքները կարդացի՛ անոր համար կը մտմտամ” , պատասխանեց անհաւատը :

“Շատ աղէկ, ի՞նչ կը խորհիս անոր վրայով”,  
հարցուց իր բարեկամը :

“Բսեմ՝ քեզի ինչ որ առաջ կը խորհէի, պատասխանեց անհաւատը. ես կը կարծէի թէ Սոփսէս ուրիշ մէկը չէր, բայց միայն լեռները պարտող աւազակներուն գունդին առաջնորդը, որ իր ճարտարմտութիւնովը գերագոյն իշխանութիւն մը ստացաւ սնապաշտ ժողովրդեան մը վրայ. և թէ՛ Սինա լեռանը վրայ արուեստով վառած կրակ երեցուց իրեն յիմար հետևողները զարմացունելու համար, որոնց վախը և՛ սնապաշտութիւնը՝ իմիասին խառնուած անոնց անանկ երեւակայել տուաւ թէ գերբնական տեսիլք մըն էր ան”:

“Բայց հիմա դուն ի՞նչ կը խորհիս”. ըսաւ իր բարեկամը :

“Ըստ իրենքին Բնոմիւսանը կը նայիմ, ըսաւ անհաւատը. և կ’աշխատիմ որ նայիմ արդեօք կրնամ բան մը աւելցունել անոր վրայ, կամ անկէց բան մը վերցունել, որ անիկայ աւելի աղէկ ընեմ. բայց՝ Տէ՛ր իմ, չեմ կրնար. ինչու որ կատարեալ է ան”:

“Ղուաջին պատուիրանքը, ըսաւ անհաւատը՝ կ’ուղղէ մեզ դէպի Ստեղծողին, որ զինքը սիրենք ու յարգենք մեր բոլոր սրտովը. արդարև ատ իրաւ է : Թէ որ ինքն է մեր Ստեղծողը՝ մեր Պաշտպանը՝ և մեր գերագոյն Ռարերարը, պարտինք զինքը Ստեղծողին՝ Պաշտպանի՝ և Ռարերարի պէս պատուել ու սիրել, և ոչ ամենեկին ուրիշ մէկը”:

Երկրորդը՝ կուսպաշտութիւնը կ'արգիլէ, որ առ ալ անշուշտ իրաւ է :

Երրորդը՝ զուր տեղը երդում ընելը կ'արգիլէ  
 Չորրորդը՝ կրօնքին պաշտօնը կատարելու համար որոշեալ ժամանակ մը կը հաստատէ : Ի՞նչ որ Լստուած կայ, անշուշտ պարտինք զինքը պաշտել . պէտք է որ արտաքին մեծարանք մը ըլլայ ներքին յարգութիւնը յայտնելու համար : Ի՞նչ որ պէտք է որ Լստուած պաշտուի, պէտք է որ անոր համար որոշեալ ժամանակ մըն ալ ըլլայ, որ այնպէս ամէնքն ալ կարենան պաշտել զինքը միաբանութեամբ և առանց արգելքի : Եւ Լստուած պաշտելու համար եօթը օրէն մէկ օրը շատ չէ, և չեմ կրնար ըսել թէ քիչ է :

Հինգերորդը՝ ընտանի կապակցութենէ առաջ եկած սեփական պարտաւորութիւնները կը ցուցունէ :

Ենկէց ետքը մէկալ՝ մնացած օրէնքներն ալ մեր դրացիներուն դէմ եղած անիրաւութիւնները ու վնասները կը կարգադրեն . որոնք կը բաժնուին կեանքին դէմ եղած վնասներուն, պարկեշտութեան՝ ստացուածքին՝ և անունին : Եւ օրինաւոր ու ազդու խորհուրդ մը յառաջ բերելով, ըսաւ անհաւատը, կը դիտեմ որ ամէն մէկ օրէնքը իր կարգին մէջը գլխաւոր վնասը կ'արգիլէ : Ինչպէս որ մեծագոյն վնաս է սպանութիւնը՝ մարդու կեանքին, շնութիւնը՝ պարկեշտութեան, գողութիւնը՝ ստացուածքին, և սուտ վկայութիւն ընե-



ը՝ անունին՝ Հիմա՝ մեծագոյն վնասները անշուշտ  
կը պարունակեն իրենց մէջը իրենց պզտիկ մա-  
սերն ալ . զորօրինակ սպանութիւնը կը պարու-  
նակէ իր մէջը մարդուս կեանքին դէմ եղած բոլոր  
ուրիշ մանր վնասներն ալ . շնութիւնը կը պարու-  
նակէ իր մէջը մաքրութեան դէմ եղած բոլոր ու-  
րիշ մանր վնասներն ալ . և մէկաշններն ալ նոյն-  
պէս են : Նաև օրէնքը կը լմնայ ու կատար-  
եալ կ'ըլլայ լայապատուիրանքով մը , որ կ'արգիլէ  
մեր ընկերին դէմ եղած ամէն մէկ անվայել բաղ-  
ձանքն ալ :

Կը խորհէի թէ՛ ըսաւ անհաւատը , Մովսէս  
ատ օրէնքները ո՞ր տեղ գտաւ , ես հին պատ-  
մութիւններուն տեղեակ եմ , որ Նագիպտացիները  
և անոնց սահմանակից ազգերը կուպաշտ էին .  
Յոյներն ալ և Հռովմայեցիներն ալ ասանկ էին .  
և իմաստուն ու ընտիր Յոյները կամ Հռովմայեցի-  
ները բնաւ ասոր նման օրինաց գիրք մը չչինեցին :  
Մովսէս ո՞ր գրաստան օրէնքը , որ խիստ լուսաւոր-  
եալ դարերուն իմաստութենէն ու փիլիսոփայու-  
թենէն լալ աւելի գերազանց է : Հիմակուան դարին  
հետ բաղդատելով ինքը խիստ բարբարոսութեան  
տանները ապրեցաւ . բայց այսուամենայնիւ ա-  
նանկ օրէնք մը տուաւ , որուն մէջ բոլոր յաջորդ  
դարերուն գիտունները և փիլիսոփաները չեն կրթ-  
նար սխալ մը գտնալ : Ո՞ր գտաւ ան , արդեօք  
ինքը իր եղած դարին մէջի մարդիկներէն այնչափ  
աւելի գիտուն էր որ ասանկ բարձր բանի մը

ձեռք զարնէր, չէ՛ . հապա հասկըցայ որ ինքը ուր  
 օտացաւ ան , անշուշտ երկինքէն իջած պիտի ըլլայ  
 ան , համոզուեցայ թէ Սուրբ Վիրքը ճշմարիտ է՛ :

Ընհաւատը՝ որ ալ անհաւատ չէր , մինչև իր  
 մահը Վրիստոնէութեան ճշմարտութեանը հաս-  
 տատուն՝ հաւատալով իրեք տարիի չափ ապրեցաւ .  
 Ինքը Ըստուածաշունչ՝ գիրքին հետևիլը շարունա-  
 կեց , և օր ըստ օրէ աղէկ տեղեկութիւն ունեցաւ  
 անոր . հայհոյութիւն իրնելը մէկ դի ձգեց . եր-  
 գումը որչափ որ առաջ իրեն ընտանի էր , այն-  
 չափ ալ հիմա ատելի եղաւ իրեն . երբոր իր առ-  
 ջի ունեցած զուարճասէր ընկերները երգում մը  
 կը գործածէին , միշտ կը յանդիմանէր զանոնք :  
 Ինքը երգումին անպիտան ըլլալը ցուցունելով կը  
 համոզէր անոնք , ու կ'ըտէր թէ ինքը չկրցաւ  
 մտմտալ առաջ թէ ինչպէս ցաւալի ու զգուելի  
 է երգումը քրիստոնէի մը , ինչպէս որ հիմա  
 իմացաւ :

Ես պատմողս՝ շատ ատեն չեղաւ որ աս պատ-  
 մութիւնը լսեցի , չէ՛ թէ ուրիշ մէկէ մը , հապա  
 աս երկուքին մէկէն : Կարելի է որ ժամանակ անց-  
 նելով թեթև փոփոխութիւն մը ըրեր եմ , բայց  
 կարծեմ որ անշուշտ մեծ չէ : Զ անացի՝ որ շատ  
 զգուշութեամբ անսխալ գրեմ՝ աս պատմութիւնը ,  
 և անոր համար թէ որ ուրիշ հարկաւոր և երևելի  
 բաներ ալ կային , շատ աղէկ չսխալուա հա-  
 մար ձգեցի անոնք , ու շատ վաւ գիտցածներս  
 գրեցի :

Թող կարգացող մտածէ աս պատմութեան վրայ . որ ես կը հաւատամ թէ շատ օգտակար է : Գլխաւոր խորհուրդը աս է՝ որ Տասը Պատուիրանքը յիշատակութեան արձան մըն է , մանաւանդ Աինա լեռանը վրայ եղած Լստուածային գործին՝ այսինքն Տասը Պատուիրանքին արուիլը , յիշատակութեան գերագոյն արձան մըն է : Ի այց աս ալ նայէ դուն սիրելիս՝ թէ ինչ՛ տեսակ անհաւատութիւն մը կար աս մարդուն վրայ , նայէ՛ ալ իր երկարատե ակտէն իր ընդունած օգուտը , և իր քրիստոնեայ բարեկամին իմաստուն խրատները ու մարգատէր հոգածութիւնը , և Լստուածային նախախնամութեան վայելուչ կարգադրութիւնը , որով աս ամէնը մէկ տեղ եկան , և անհաւատին Տասը Պատուիրանքին պատուականութիւնը ինչպէս զգալը և բացատրելը , և Լստուածաշունչ Գիրքին փառաւորեալ ու բարեկարգիչ զօրութիւնը Սուրբ Հոգիին օրհնութիւնովը : Ուստի աս ամէնը նայելով ու մտառութեամբ քննելով՝ թո՛ղ քու հաւատքդ օր ըստ օրէ ալ աւելի զօրանայ , քու ճշմարտութեան վրայ ունեցած փափաքդ թո՛ղ շատնայ , և քու աստուածպաշտութիւնդ հաստատուի :

Ուրաւ Գաղղիայի անհաւասարն զնայութիւնը  
 Կրթութեան զրայով իր գրած Յարէն առնուած ։

« Եւ խոստովանիմ քեզի՝ կ'ըսէ ինքը, թէ ինտոր  
 որ Բլետտորանին մաքրութիւնը իր զօրութիւնը իմ  
 սրտիս կը ներգործէ, անանկ Սուրբ Գրոց գերա-  
 զանցութիւնն ալ զիս կը զմայլեցունէ ։ Կարդա մեր  
 փիլիսոփաներուն գործքերը բոլոր իրենց պերճա-  
 խօս ասութիւններովը, և պիտի գտնաս թէ ինչ  
 պէտանարգ, ինչպէս արհամարհելի են անոնք Սուրբ  
 Գրոց հետ բաղդատելով ։ Կարելի է որ մեկ գիրք  
 մը՝ միանգամայն այսչափ պարզ և վսեմ ոճով  
 գրուած, միայն մարգու գործ ըլլայ ։ Հնարաւոր  
 է որ ան սրբազան անձը՝ որուն պատմութիւնը ան  
 գիրքը կը պարունակէ, ըստ ինքեան լսէ մարգ մը  
 ըլլայ ։ Կը գտնուի թէ ինքը յափշտակուած մտք  
 մէկու մը կամ փառասէր աղանդաւորի մը եղա-  
 նակովը խօսի ։ Ի՞նչ քաղցրութիւն և ի՞նչ մաք-  
 րութիւն կ'երևայ իր եղանակին մէջ, ի՞նչ բա-  
 րեշնորհ ազգութիւն իր ասութեանը մէջ, ի՞նչ  
 վսեմութիւն իր առակներուն մէջ, ի՞նչ խօրին  
 իմաստութիւն իր քարոզութեանը մէջ, ի՞նչ մաքի  
 արագութիւն, ի՞նչ ճարտարութիւն, ի՞նչ ճշը-  
 մագրութիւն իր պատասխանիներուն մէջ, ի՞նչ  
 մեծ իշխանութիւն իր կիրքերուն վրայ ։ Ո՞ր է ան  
 մարդը՝ ո՞ր է ան փիլիսոփան որ կարող ըլլայ ա-  
 սանկ ապրիլ և ասանկ մեռիլ, առանց տկարու-  
 թեան և առանց անպիտուութեան ։

Պղատոն երբոր բարի մարդուն նկարագրութիւնը կ'ընէր՝ թէ անիկայ յանցաւորութեան ամէն վերայ զըպարտութիւններովը բեռնաւորած՝ և սակայն առաքինութեան ամենաբարձր վարձատրութիւններուն արժանաւոր մէկը պիտի ըլլայ, ինքք ճիշտ Աստու Քրիստոսի վարքը կը նկարագրէր. իր ըրած նկարագրութիւնը անանկ պքանչելի նմանութիւն ունէր Քրիստոսի վարքին, որ եկեղեցիին բոլոր հայրերը իմացան անիկայ :

Ինչ նախապաշարմունք՝ ինչ կուրութիւն պարտի ըլլալ Սոփրոնիսկոսի որդին Սարիամու Որդիին հետ բաղձատեւ : Ինչ անհուն անհամեմատութիւն մը կայ անոնց մէջը : Սոկրատէս առանց ցաւի և առանց խայտառակութեան մեռնելով, դիւրութեամբ կրցաւ մինչև վախճանին իր պատիւը պահել : Բայց սակայն թէ որ իր մահը իր կեանքը չպսակեր, տարակուսելի բան մը պիտի ըլլար՝ թէ արդեօք Սոկրատէս բոլոր իր իմաստութիւնովը սնափառ իմաստակէ մը աւելի՞ էր : Կ'ըսուի թէ բարոյականութեան գիտութիւնը ինքք հնարեց, բայց ուրիշները իրմէն առաջ բարոյականութիւն կը գործածէին : Ուստի ինքք միայն պնոնց ըրածը պատմեց, ու անոնց օրինակը պատուիրեց : Սոկրատէս արդարութեան սահմանը տալէն առաջ Լճիստիդէս արդարութիւն կը գործէր : Սոկրատէս հայրենասիրութիւնը պարտք ըլլալ ցուցունելէն առաջ Լէոնիդաս իր կեանքը դրաւ իր հայրենեացը համար : Սոկրատէս ժուժ-

կալութիւնը գովելէն առաջ Սպարտացիք ժուժկալ ժողովուրդ էին: Սոկրատէս առաքինութիւնը սահմանելէն առաջ Աթենաստան առաքինի անձերով լեցուն էր:

Բայց Ախուս իր քաղաքացիներուն մէջը ո՞ր կրցաւ սորվիլ ան զուտ և գերագոյն բարոյակաՆութիւնը, որուն համար միայն ինքը մեզի պատուէր ու օրինակ տուաւ: Ամենամեծ իմաստութիւնը կոյր նախանձաւորութեամբ մոլեգնեալ անձանց մէջ յայտնուեցաւ, և դիւցազնական առաքինութիւններուն պարզութիւնը երկրիս վըայի ամենէն ցած անձը մեծացուց: Սոկրատէս իր բարեկամներուն հետը խաղաղութեամբ իմաստասիրութեան պարապած մեռնելով՝ իր մահէն ՚ի զատ ամենաշարմար մահ մը չերևար բաղձալու: Բայց Ախուս բոլոր ազգէ մը նախատինք կշտամբանք ու չարախօսութիւն քաշած անհնարին ցաւերու մէջ իր հոգին աւանդելով, իր մահէն ՚ի զատ սոսկալի մահ չկայ վախնալու: Իրաւ Սոկրատէս մահադեղը առնելուն՝ անիկայ լալով իրեն մատակարարող օրհնեց. բայց Ախուս դառնակսկիծ չարչարանքներուն մէջ իր անողորմ չարչարողներուն համար աղօթեց: Սոյոք կ'ըսեմ, թէ որ Սոկրատէսին կեանքը ու մահը փիլիսոփայի մը վայելուչ էր, Ախուսի կեանքն ու մահը Աստուծոյ վայելուչ էր: Կարծիք ունենա՞նք թէ աւետարանական պատմութիւնը լոկ առասպել մըն է: Իրաւ որ՝ բարեկամս, անիկայ առասպելաբա-

Յուժեանն նշան չունի . հասրո անոր հակառակ  
 Խոհրատէսի պատմութիւնը՝ որուն վրայով մէկը  
 շտարակուսիք , Յիսուս Վրիստոսի պատմու-  
 թեանը չափ աղէկ հաստատուած է : Ը իսակը՝  
 ասանկ կարծիքը միայն դժուարութեան տեղը կը  
 փոխփոխէ առանց անիկայ խափանելու : Վրանցի  
 առաւել խելք չպառկելու քան է թէ խել մը  
 անձինք մէկ տեղ միաբանէին ասանկ պատմութիւն  
 մը գրել , քան թէ միայն մէկ հոգի մը ասանկ պատ-  
 մութիւն մը կազմել տար իր վարքովը : Սանտ-  
 ւանդ թէ Հրէայ հեղինակները ան ոճին բառա-  
 կանութիւն չունէին , ու Մ. Եւտարանին մէջը պա-  
 րունակուած բարոյականութենէն օտար էին , որուն  
 Ճշմարտութեանը նշանները այնչափ սքանչելի և  
 ճնմանելու են , որ անոնք հնարողները առաւել  
 ևս զարմանալի հանգամանքներու տէր պիտի ըլ-  
 լային , քան թէ անոնց Մատթէան” :

Չեւտարանիւն Մ. Եւտարանին Յշմար-  
 արանիւնը վրայ :

Մ. Եւտարանիւնները՝ որ Մ. Եւտարանը գրեցին ,  
 պարզամիտ՝ հաւատարիմ՝ անխարդախ ու ազէտ  
 մարդիկ էին , խիստ խոնարհ փիճակի մէջ ըլլալով .  
 և ասանկ նուրբ ու կապակցեալ կարգով խաբէ-  
 ութիւն մը հնարելու և առաջ տանելու բորբոքին  
 կարող չէին , ինչպէս որ Վրիստոնէական կրօնքը

եղած պիտի ըլլար՝ թէ որ ճշմարիտ չըլլար: Այս և իրենց պատմութիւնները անկեղծութեան՝ պարզ-մտութեան՝ արդարութեան՝ և ճշմարտութեան զօրաւոր նշաններովը լեցուն են: Անոնց ամենամեծ թշնամիները բնաւ չկրցան պզտիկ բիծ մը գտնալ անոնց վարքին վրայ. ինչպէս ուրեմն ասանկ անհնարին խարէութիւն մը շինելու յարմար կրնանք սեպել զանոնք: Անոնք ոչ հաճութիւն՝ ոչ օգուտ՝ ո՛չ ալ զօրութիւն կրցան ստանալ անով. հապա անոր հակառակ ասագին չարիքներ հասաւ իրենց վրայ՝ նաև մահն ալ: Աւրեմն թէ որ անոնք ստախօս էին, առանց պատճառի և առանց բան մը շահելու էր իրենց ստախօսութիւնը, մանաւանդ թէ մարդկային գործողութեանց վրայ սովորաբար զօրութիւն ունեցող բոլոր շարժառիթներուն և բոլոր օգուտներուն հակառակ ալ էր:

Անոնք անանկ հաւատք մը քարոզեցին որ ստութիւնը յաւիտենական դատապարտութեան տակ ձգելով կ'արգիլէ՝ և նոյն ատենը անհաւատին կարծեացը նայելով՝ ան նոյն հաւատքը ստութեամբ հաստատեցին. ու երբոր անհաւատին կարծեօքը իրենք խիստ անարգ և անշահ կերպերով աշխարհս խաբելու մոլորցունելու ետևէ էին, ան նոյն ատենը՝ ինչպէս որ ամէնքս գիտենք, և ինքը անհաւատն ալ կը խոստովանի, անոնք մեծամեծ աշխատութիւններ անձերնիս կ'առնէին ու անտանելի նեղութիւններ կը քա-



չէին բոլոր մարդոց արդարութիւն սորվեցունելու  
համար :

Եսիկայ հաւատալու բան է . չէ՛ : Եւն բա-  
նաւոր միտք աս արտառոց կարծիքը մէկ դի պիտի  
ձգէ , ու անոր հակառակ աւետարանիչներուն  
ճշմարտախօսութիւնը պիտի խոստովանի :



Մահը փառքին ծախքան է :

Մահը՝ բարի մարդու մը ուրիշ բան չէ , բայց մի-  
այն իր հօրը տանը մէկ պզտիկ խաւարային սեն-  
եակէ մը դուրս մութ գաւիթի մը մէջէն անցնիլը  
դէպի ուրիշ սենեակ մը՝ որ գեղեցիկ ու մեծ է ,  
լուսափայլ ու փառաւոր է , և զինքը սիրով հոն  
ընդունողը Եստուած է :

Ո՛վ իմ երկնաւոր բնակարանիս ճառագայթները  
ու լուսափայլութիւնները , երանի՛ թէ ծագէիք  
դէպի վար , և փայլեցունէիք ան մութ գաւիթը  
ասանկ ուրախալից պայծառութիւնով մը , անանկ  
որ՝ երբոր անոր մէջէն անցնելու կանչուիմ՝ բոլոր  
վախերը հալածուին :

## Պահ և Վրբխարոնեայ :

Սահը որ մը Վրխարոնէի մը դէմ ելաւ , ու սկսեցին այսպէս խօսակցիլ իրարու հետ :

«Վարի՛ եկար՝ ո՛վ անմահութեան դեսպան , հազար բարի եկար՝ , ըսելով ողջունեց Վրխարոնեան մահը :

Սահ . Լստ ի՞նչ համարձակութիւն է ո՛վ որդի մեղաց , չե՞ս վախնար իմ մօտենալէս :

Վրբխարոնեայ . Չէ՛ . ան որ բարի Վրխարոնեայ է՝ կրնայ քու երեսդնայիլ առանց վախնալու :

Սահ . կրնաս նայիլ ինծի առանց սարսափելու , որ ես հիւանդութեամբ ու չարչարանքներով քեզ կը նեղեմ . կրնաս համբերել ան պաղ քրտինքներուն որ իմ թւերէս կը կաթեցունեմ :

Վրբխարոնեայ . Հրամբես . ատոնց մէկը իմ սրտիս մէջը վախ մը չձգեր :

Սահ . կը զարմանամ , ի՞նչ է պատճառը քու չվախնալուդ . քսէ՛ ինծի որ գոնէ սխրտահանգչի :

Վրբխարոնեայ . Պատճառը ան է որ աղէկ գիտեմ թէ քու արագութեամբ ինծի մօտենալովիս այն քիչ մը ժամանակ իմ մարմինս նեղելու համար է , բայց իմ հոգւոյս վրայ բնաւ զօրութիւն չունիս :

Սահ . Դուն ո՛վ ես ո՛վ մահկանացու , որ իմ քեզի երեկըս զօրութիւն պիտի չունենայ քեզ գողացունելու :

Վրիստոնեան քաղցրութեամբ ժպտելով մահին երեսն 'ի վեր՝ ըսաւ, «Ես Վրիստոնեայ մըն եմ, մահուան զօրութիւնը Յաղթողին արիւնովը արդարացած»:

Անտեն մահը Վրիստոնեային շունչը կտրեց, ու երկուքն ալ աներևոյթ եղան: Իրենց ոտքին տակը փոս մը բացուեր էր, ու անոր մէջը երկան բան մը դրին:

Աս միջոցին որ ես կու լայի, մէյմ'ալ յանկարծ երկնային ձայներ ականջիս եկան. վեր նայեցայ, ու Վրիստոնեան ամպերուն մէջը տեսայ. իր երեսը կը փայլէր նոյն խնդումովը որ մեռնելէն քիչ մը առաջ տեսայ, ու իր ձեռքերը կուրծքը կապեր էր: Առաջափայլ հրեշտակներ ուրախութեան ձայներով իրեն մօտեցան, ու ինքն ալ անոնց պէս սկսեց փայլիլ: Անտենը նորէն լացի՝ ու գերեզմանին մէջը նայելով իմացայ որ Վրիստոնեային մարմինն էր անոր մէջինը, հոգին երկինքը թռած ըլլալով:





